



Հայաստանի կենսաբ. հանդես, 4(62), 2010

ՀԱՏԱՊՏՂԱՅԻՆ ԿԵՆՈՒ ՄԵՐՄԵՐԻ ՖԻԶԻԿԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԲԵՐ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Վ.Լ. ԲԱԴՅԱՆ

ՀՀ ԲՆ, Արգելոցապարկային համալիրի ՊՈԱԿ, Կոտայքի մարզ գ.Ջրվեժ
badalyan_vahan@yahoo.com

Կատարված ուսումնասիրությունների արդյունքները փաստում են, որ բնակլիմայական տարբեր պայմաններում աճող հատապտղային կենու (*Taxus baccata* L.) սերմերի ֆիզիկատեխնոլոգիական հատկությունների միջև էական տարբերություններ չկան. դա հնարավորություն է ընձեռում ցանքի բոլոր դեպքերի համար մշակել մեկ ցանիչ ապարատ:

*Կենի հատապտղային և սերմ և ֆիզիկատեխնոլոգիական
հատկություններ և ռելիկտ*

Исследования показывают, что семена тиса ягодного (*Taxus baccata* L.), произрастающего в разных климатических условиях, особо не различаются своими физико-технологическими свойствами, что дает возможность разработать один высеивающий аппарат для всех случаев посева.

Тис ягодный и семя и физико-технологические свойства и реликт

Results of investigations showed that the seeds of common yew (*Taxus baccata* L.) growing in different climatic conditions did not revealed differences between technological and physiological properties. This gives us possibility to develop one sowing apparatus for all cases.

*Common yew and seed and physiological and technological specifications and
relict*

Հայաստանն իր աշխարհագրական դիրքով, ռելիեֆի առանձնահատկություններով, լանդշաֆտի ուղղաձիգ գոտիականությամբ յուրահատուկ լեռնային երկիր է, որոնցով էլ պայմանավորված է ուրույն բնակլիմայական պայմանների և հարուստ կենսաբազմազանության առկայությունը: Երկրի բուսականության ռեսուրսները ներառում են 3500 տեսակ բարձրակարգ բույսեր. 323-ը ծառաբույսեր են [2], որոնց թվում կան այնպիսիք, որոնք, նախկինում զբաղեցնելով անհամեմատ ընդարձակ տարածքներ, կլիմայական և մարդածին գործոնների ազդեցության հետևանքով ներկայումս պահպանվել են փոքր ծառատների կամ մենաձառերի տեսքով: Դրանց թվին է պատկանում հատապտղային կենին (*Taxus baccata* L.), որը Հայաստանում աճում է Դիլիջանի, Իջևանի, Նոյեմբերյանի, Բերդի, Ալավերդու և Կապանի տարածաշրջաններում [3]: Ըստ մեր դիտարկումների հանրապետության գրեթե բոլոր տարածքներում առկա է բնական վերականգնման շատ ցածր ցուցանիշ:

Կենին 10-25 (30)մ բարձրության մինչև 150 (250)սմ բնի տրամագծով երկտուն, հազվադեպ միատուն ծառ է (նկ.1): Անտառում սերմնատվությունը սկսում է 70-120, իսկ առատ լուսային պայմաններում՝ 20-30 տարեկանից: Կոնառաջացումը տեղի է ունենում ապրիլ-մայիս ամիսներին: Փոշոտումը տեղի է ունենում քամու միջոցով: Սերմերը հասունանում են նույն տարին՝ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Նրանք ձվաձև են,

սրածայր: Հյութալի սերմնամաշկը վառ կարմիր է, գավաթանման և ընդգրկում է սերմը մինչև գագաթը, սակայն այն չի սերտաճում և սերմը չի պարփակում իր մեջ [2, 3]:

Կենին և նրա բազմաթիվ պարտիզային ձևերը՝ *Nidiformis*, *Summergold*, *Nana*, *Compacta*, *Semperaurea* և այլն, շնորհիվ բարձր գեղագարության, լայն կիրառում են գտել կանաչապատման մեջ, հատկապես եվրոպական բազմաթիվ երկրներում, որտեղ օդի հարաբերական խոնավությունը բավականին բարձր է:



Նկ. 1. Հատապտղային կենու ասեղնատերևներն ու սերմերը

Հաշվի առնելով Հայաստանի անտառներում հատապտղային կենու ինքնավերականգնման դժվարությունները, ինչպես նաև կանաչապատման մեջ օգտագործելու հեռանկարները, մեր կողմից խնդիր է դրվել ուսումնասիրել կենու սերմերի ֆիզիկատեխնոլոգիական հատկությունները (երկարությունը, փոխաղաղահայաց տրամագծերը, ծավալային զանգվածը, 1000 սերմի կշիռը, ներքին և արտաքին շփման անկյունները երկաթի, հղկված փայտի, ռետինի հետ), որոնք հետագայում կարող են հիմք հանդիսանալ սերմնացան ասպարատի մշակման համար. այն լայն կիրառություն կգտնի անտառվերականգնման աշխատանքներում և տնկարանային տնտեսություններում: Մերմնացան ասպարատի նախագծման համար կարևորվում է սերմերի գծային չափերն ու երկրաչափական ձևերը, որոնք վճռական նշանակություն ունեն ցանքի բավարար իրականացման համար: Նշված տեխնոլոգիական հատկություններով բնութագրվում են անցքերից սերմերի արտահոսելու գործընթացը:

Նյութ և մեթոդ: Ուսումնասիրության նյութ են հանդիսացել 2007-2009թթ. ՀՀ անտառներից մթերված կենու սերմերը, որոնց ուսումնասիրությունները կատարվել են լաբորատոր պայմաններում: Յուրաքանչյուր տարածաշրջանից առանձնացվել են հարյուրական սերմ, որոշվել է դրանց երկարությունը (L) և փոխաղաղահայաց տրամագծերը (D_1 , D_2) (նկ. 2): Բացի գծային չափերից, որոշվել են նաև ծավալային զանգվածը, 1000 սերմի կշիռը, ներքին և արտաքին շփման անկյունները երկաթի, հղկված փայտի և ռետինի հետ:



Նկ. 2. Հատապտղային կենու սերմերի գծային չափերի վերցման սխեման

Բարձր տրոսնության նյութերի ներքին շփման անկյունը կարելի է որոշել նյութի բնական թեքության անկյամբ, որը որոշվում է նյութը լցնելով հարթ և ողորկ մակերևույթ ունեցող հարթակի վրա այնքան, որ ձևավորվի հստակ անկյուն, ինչը և կլինի նյութի բնական թեքության անկյունը [1]:

Արտաքին շփման անկյունը որոշելու համար օգտվել ենք նմանատիպ գիտափորձերի համար նախատեսված ստենդից, որի հիմնական կառուցվածքային միավորը շարժական հարթակն է: Հարթակի մի ծայրը անշարժ ամրացված է, իսկ մյուսն ունի բարձրացնելու և որոշակի անկյուն կազմելու հնարավորություն: Փորձանմուշը դրվում է հարթակի վրա և բարձրացվում այնքան ժամանակ, մինչև այն սկսի սահել: Փորձերը դրվել են հինգ կրկնությամբ:

Արդյունքներ և քննարկում: Ուսումնասիրության արդյունքներից պարզվել է, որ տարբեր տարածաշրջաններից մթերված սերմերի ֆիզիկա-տեխնոլոգիական հատկությունները բնութագրող ցուցանիշների մեջ էական տարբերություններ չեն նկատվում (աղ. 1): Սերմերի միջին երկարությունը տատանվում է 6.3-6.8 մմ, մեծ տրամագծերի դեպքում՝ 4.7-4.9 մմ, իսկ փոքր տրամագծերի դեպքում՝ 4.3-4.5 մմ սահմաններում:

Աղյուսակ 1. Հատապտղային կենու սերմերի ֆիզիկա-տեխնոլոգիական հատկությունները

Ֆիզիկա-տեխնոլոգիական հատկությունները	Տարածաշրջան					
	Ալավերդի	Ալգեձոր	Դիլիջան	Իջլան	Կապան	Նոյեմբերյան
Գծային չափերը, մմ						
L	6.5	6.8	6.6	6.3	6.6	6.4
D ₁	4.8	4.7	4.9	4.9	4.8	4.8
D ₂	4.3	4.3	4.5	4.3	4.4	4.4
Ծավալային զանգվածը, գ/լիտր	556.0	563.7	558.2	568.4	560.2	565.4
1000 հատի բացարձակ զանգվածը, գ	68.0	74.9	74.8	67.8	70.1	67.6

Ֆիզիկական ցուցանիշների ուսումնասիրություններից բացի ուսումնասիրվել են նաև որոշ տեխնոլոգիական ցուցանիշներ՝ ներքին շփման անկյունը՝ τ ($\tau=19^\circ$, ինչպես նաև որոշ նյութերի հետ արտաքին շփման անկյունը. երկաթ - 26° , հղկած փայտ - 31° , ռետին - 42° :

Ներքին և արտաքին շփման անկյունների արդյունքները նույնն են եղել բոլոր տարածաշրջաններից մթերված սերմերի համար:

Բնակլիմայական տարբեր պայմաններում աճող հատապտղային կենու սերմերի ֆիզիկա-տեխնոլոգիական հատկությունների միջև արձանագրված ոչ մեծ տարբերությունները հնարավորություն են ընձեռում ցանքի բոլոր դեպքերի համար մշակել մեկ ցանիչ ապարատ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Գրիգորյան Շ.Մ.* Մաթեմատիկական վիճակագրության տարրերը և գիտափորձի պլանավորման տեսությունը: Երևան, Աստղիկ, 2001:
2. *Վարդանյան Ք.Հ.* Ծառագիտություն: Երևան, Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 2005:
3. *Վարդանյան Ք.Հ., Բադալյան Վ.Լ., Հովսեփյան Ռ.Ա.* Հատապտղային կենին Դեբեդ գետի ավազանում: Հայաստանի կենսաբ. հանդես, 62, 1, էջ 93-98, 2010:

Ստացվել է 05.06.2010